Շարդէնի[1]) վկայութեամբ — որ վեց տարի ապրել է Պարսկաստանում եւ տաս տարի Արեւելքում — Օգոստինեանները Պարսկաստանում համարւում էին Փորթուգալիայի ներկայացուցիչները, Կարմելեանները՝ Պապի, իսկ Կապուչիններն ու Յիսուսեանները այնտեղ հաստատուեցին Ֆրանսայի յանձնարարականով եւ գտնւում էին ֆրանսական պաշտպանութեան ներքոյ:

Եւրոպական միւս պետութիւնները եւս — գերմանական կայսրութիւնը, Վենետիկի հասարակապետութիւնը, Լեհաստանը եւն. — որոնց համար միսիոնարները պաշտօնական ներկայացուցիչներ չէին Պարսկաստանում, բայց եւ այնպէս ամէն կերպ հովանաւորում էին նրանց եւ աջակցում՝ հայերին հոգեմտաւոր եկեղեցու գիրկը դարձնելու: Նրանցից ոմանք մինչեւ իսկ այնքան հեռու են գնում, որ հայերին դաւանափոխ անելը դարձնում են իրենց համար գործունէութեան նպատակ: Այսպէս, օրինակ, Լեհաստանի Եան Սոբեսկի թագաւորը (1624–96) պարսից Շահի մօտ է ուղարկում յատուկ յանձնարարական նամակով լեհահայ Պետրովիչին, «որի հայրենասիրութիւնը եւ իր հայերնակիցների հոգին փրկելու նախանձախնդրութիւնը նրան վերադարձրին Հայաստան, որ այնտեղ աշխատի իր ազգը միացնելու հոգեմտաւոր եկեղեցուն»: (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութ. եր. 14):

Այս տեսակէտից չափազանց ուշադրաւ է ֆրանսական Լուդովիկոս 14-ի քաղաքականութիւնը: Լուսաւորչական հայերին իրենց մայրենի եկեղեցու ծոցից դուրս քաշելու համար նա ոչ միայն հովանաւորում էր կաթոլիկ հայերին, այլ մինչեւ անգամ պարսից կառավարութեանը դրդում էր Լուսաւորչական հայերի դէմ: Իր բազմաթիւ նամակների մէջ նա խնդրում էր կառավարութեան առանձին ուշադրութիւնը դէպի կաթոլիկ հայերը, մանաւանդ դէպի եղուիտական հիմնարկութիւններն ու դպրոցները Շամախում, Երեւանում, եւ դէպի Դոմինիկեանները՝ Նախիջեւանում:

Յատկապէս նրա մէկ նամակը Շահարասին — գրուած 1667 թ. յունիս 23-ին — շատ բնորոշ է այդ տեսակէտից: Նա խնդրում է Շահին՝ «արդարութիւն ցոյց տալ» կաթոլիկութիւն ընդունած հայերի նկատմամբ, հրատարակելով մի յատուկ օրէնք — ինչպէս Իմամ Ջաֆարի օրէնքը մահմեդականութիւն ընդունողների համար — որով Լուսաւորչական հայերը զրկուէին ժառանգութեան իրաւունքից՝ յօդուտ իրենց ընտանիքի այն անդամի, որը կաթոլիկութիւն է ընդունել: Բացի դրանից՝ խնդրում է նաեւ թեթեւացնել բոլոր կաթոլիկ հայերի հարկերն ու տուրքերը: Նամակը վերջացնում է նրանով, որ կաթոլիկ հայերը սպասում են այս «արդարութիւնը» Շահից եւ որ ինքն էլ շատ շահագրգռուած է այն առանձնաշնորհումներով, որ կը տրուեն կաթոլիկ հայերին, որի համար նա ինքը չափազանց երախտապարտ կը մնայ դէպի Շահը (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութիւնները, եր. 14):

Պարզ է, որ Պարսկաստանը ուզենալ-չուզենալ, ընդառաջ պիտի գնար Եւրոպայի, մանաւանդ Ֆրանսայի մեծ եւ հզօր թագաւորի ցանկութիւններին հէնց թէկուզ նրանց իր կողմը շահելու եւ իր թշնամի տաճիկների դէմը հանելու համար: Մէկ էլ՝ Պարսկաստանը շահագրգռուած էր Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսայի հետ առեւտրական յարաբերութիւններ կապելու խնդրով. հետեւաբար ամէն կերպ պիտի աշխատէր եւրոպական պետութիւնների համակրութիւնը վաստակել:

Դրա վրայ եթէ աւելացնենք նաեւ այն թանկագին ընծաներն ու կաշառքները — իսկ դուք գիտէք, թէ մինչեւ այսօր էլ նուէրն ու կաշառքը ի՛նչ կախարդական ոյժ ունին Պարսկաստանում — որ եւրոպական կառավարութիւններն ու իրենք միսիոնարները առատօրէն տալիս էին պարսից Շահերին եւ իշխանաւորներին, ապա միանգամայն հասկանալի կը լինի այն ազդեցութիւնը, որ վայելում էին կաթոլիկ հիմնարկութիւններն ու քարոզիչները Պարսկաստանում:

Ուրեմն, վա՜յ հայ լուսաւորչական եկեղեցուն եւ հայ լուսաւորչականներին:

Եւ յիրաւի. իրենց այսքան զօրեղ զգալով, կաթոլիկ քարոզիչները յաճախ դիմում

---

1) Շարդէնը (1643–1713) ֆրանսացի նշանաւոր ճանապարհորդ է. ունի մի շարք ուսումնասիրութիւններ Արեւելքի մասին: Յատկապէս նշանաւոր է "Voyages en Perse et autres lieux de l'Orient":